Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«22» օգոստոսի 2022 թ. թիվ 171 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

(Նոր խմբագրությամբ)

1. Սույն կարգը սահմանում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԿՄԿ) ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմի և հետազոտողների հետազոտությունների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները:

2. ԳԿՄԿ ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմի և հետազոտողների հետազոտությունների համար տրվող լրավճարը վճարվում է գիտահետազոտական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով և չափերով:

3. ԳԿՄԿ ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմի և հետազոտողների գիտահետազոտական գործունեության որոշ տեսակների կատարման համար վճարվում են լրավճարներ՝ համաձայն Աղյուսակի.

	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ՆԿԱՐԱԳԻՐԸ	ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ («ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔԼՐԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
1.	Հոդվածի տպագրում «Web of Science» (Science Citation Index Expanded, Social Sciences Citation Index, Arts & Humanities Citation Index, Emerging Sources Citation Index) կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներում	100.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
2.	Հոդվածի տպագրում «Web of Science» (Russian Science Citation Index) շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում (բացառապես ոչ բնագիտական մասնագիտությունների դեպքում)	80.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
3.	Հոդվածի տպագրում «ԿԱՃԱՌ» գիտական պարբերականում	40.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին

4.	Հոդվածի տպագրում ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հայաստանյան գիտական պարբերականներում կամ ՀՀ ԲՈԿի կողմից երաշխավորված գիտական ժողովածուում	25.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
5.	Սույն Աղյուսակի 1-5 կետերից որևէ մեկի պահանջներին բավարարող հոդվածի տպագրում արտասահ-մանյան[2] համահեղինակ(ներ)ի հետ	Սույն Աղյուսակի 1-5 կետերից որևէ մեկով սահմանված գումարին ավելացվում է 30.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
6.	Հոդվածի տպագրում արտասահմանյան բուհի կամ գիտահետազոտական ինստիտուտի գիտական պարբերականներում	50.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
7.	Մենագրության հրատարակում (ծավալը՝ առնվազն A5 ձևաչափով 120 էջ, երկու մասնագիտական գրախոսություն և համապատասխան ստորաբաժանման գիտական խորհրդի երաշխավորությունը որպես մենագրություն)	150.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
8.	Դոկտորական ատենախոսության պաշտպանություն	150.000	վճարվում է դոկտորական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
9.	Պաշտպանությունից առաջ վերջին երկու տարում ԳԿՄԿ-ում առնվազն 20 ամիս աշխատած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության ղեկավարում	100.000	վճարվում է հայցորդի (ասպիրանտի) ղեկավարին

10.	Պաշտպանությունից առաջ վերջին երկու տարում ԳԿՄԿ-ում առնվազն 20 ամիս աշխատող և 35 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանություն	80.000	վճարվում է թեկնածուական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
11.	Պրոֆեսորի գիտական կոչման ստացում	100.000	վճարվում է պրոֆեսորի գիտական կոչում ստացած աշխատողին
12.	Դոցենտի գիտական կոչման ստացում	50.000	վճարվում է դոցենտի գիտական կոչում ստացած աշխատողին
13.	Ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրություն (ծավալը՝ առնվազն A5 ձևաչափով 200 էջ, երկու մասնագիտական գրախոսություն և համապատասխան ստորաբաժանման գիտական խորհրդի երաշխավորությունը)	150.000	բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին

4. Աղյուսակի 1 -6-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են ԳԿՄԿ այն աշխատողին, ով տպագրված հոդվածում որպես իր աշխատավայր նշել է ԳԿՄԿ-ն և հնարավորության դեպքում նաև www.isec.am համացանցային տիրույթում գրանցված իր էլեկտրոնային փոստի հասցեն: Եթե հոդվածի հեղինակը որպես իր աշխատավայր նշել է մեկից ավելի կազմակերպություններ, ապա նրան վճարվում է հասանելիք գումարի կեսը: Մի քանի կետերի համապատասխանող աշխատանքի համար հեղինակին վճարվում է գումարի առավելագույն չափ սահմանող կետով:
5. Աղյուսակի 7-12-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են միայն ԳԿՄԿ հիմնական աշխատողներին:
    1) Աղյուսակում սահմանված աշխատանքների կատարման համար, ԳԿՄԿ աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:
    2) Լրավճարները վճարվում են, եթե Աղյուսակի 1 -7-րդ կետերով սահմանված աշխատանքները, իսկ 8-12-րդ կետերով սահմանված աշխատանքների համար պահանջվող փաստաթղթերը մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 30- ն առձեռն ներկայացվել են ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին:
    3) Աղյուսակի 8-րդ, 11-րդ, 12-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԳԿՄԿ հիմնական աշխատողը ԳԿՄԿ

գիտահետազոտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին է ներկայացնում դիպլոմի կամ վկայականի պատճենը:

4) Աղյուսակի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԳԿՄԿ հիմնական աշխատողը ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին է ներկայացնում ատենախոսության սեղմագիրը, ատենախոսությունը պաշտպանած հայցորդի (ասպիրանտի)՝ գիտությունների թեկնածուի դիպլոմի պատճենը և համապատասխան տեղեկանք Անձնակազմի կառավարման բաժնից:

5) ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ, կազմում և ԳԿՄԿ տնօրենի հաստատմանն է ներկայացնում ԳԿՄԿ աշխատողներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

6. Երիտասարդ աշխատակիցների, գիտական աշխատողների հետազոտական աշխատանքները խրախուսելու և գիտության ոլորտ ներգրավելու նպատակով Աղյուսակում նշված բոլոր լրավճարներն ավելացվում են 20%-ով, եթե հեղինակը մինչև 35 տարեկան է:
7. Աղյուսակում սահմանված աշխատանքների կատարման համար ԳԿՄԿ աշխատողին լրավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում: